

Հանդիպում համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարների հետ

Տարածաշրջանների ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությունը մարզի տարածաշրջաններում համայնքների աշխատակազմերի քարտուղարների հետ պարբերաբար անց է կացնում սեմինար-քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցներին ցույց է տրվում մեթոդական և խորհրդատվական օգնություն:

Փետրվարի 4-5-ին Կապանում կայացավ հերթական հանդիպումը, որին մասնակցում էին ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏ վարչության պետ Ս. Ավետիսյանը, այլ ստորաբաժանումների ղեկավարներ, քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերի քարտուղարներ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին համայնքային ծառայողների գործերի վարման կարգում, իրավական ակտերի հաշվառմանը վերաբերող գործավարական գործերում առկա թերությունների ու բացթողումների, համայնքային ծառայողների մասնագիտական կարողությունների զարգացման և կատարողական կարգապահությանն առնչվող հարցեր:

Անդրադարձ եղավ նաև զինապարտների հաշվառման գործընթացին, որի մասին առավել հանգամանալից տեղեկատվություն ներկայացրեց Կապանի զինկոմի տեղակալ, մայոր Գ. Ներսիսյանը:

Մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏ վարչությունը համայնքային ծառայության գրեթե բոլոր գործառույթների համար պատրաստել է փաթեթներ՝ համայնքային ծառայողներին առնչվող աշխատանքները հավուր պատշաճի կազմակերպելու համար:

Ըստ պլան- ժամանակացույցի առաջիկայում քննարկումներ կլինեն նաև մարզի մյուս տարածաշրջանների քաղաքապետարանների ու գյուղապետարանների աշխատակազմերի քարտուղարների համար:

